

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՄԲԱՏ ԶԱՐԵԼԱՎԱՆՑԻՆ, ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ*

Իր վերջին հետազոտությունների մեջ Նիկողայոս Աղոնցը առաջ էր քաշում այն դրույթը, թե Հայաստանի և Անդրկովկասի ազատագրական շարժումները ծայր էին առնում միայն ֆեոդալների միջավայրում և գերազանցապես կազմում Բագրատունյաց արքայական տան պատմական «փառքը»¹:

Պրոֆ. Աղոնցի այս դրույթին պիտի առարկենք վճռապես:

Ճիշտ է, հարկավ, որ օտարատիրությունից ազատագրվելու համար հայ և հարևան ժողովուրդների գործ դրած ջանքերը երբեմն գլխավորում ու միավորում էին ֆեոդալները, մասնավորապես հայ կամ վրաց Բագրատունիները: Բայց ճիշտ է նաև այն, որ ազատագրական այդ ջանքերն առաջան ավելի վաղ, քան կազմավորվել էր ֆեոդալիզմը և քան ազատագրական շարժումները գլխավորելու համար ասպարեզ կդային հայ կամ վրաց Բագրատունիները: Մյուս կողմից հայտնի է և այն, որ Հայաստանի և Անդրբկովկասի ազատագրական տենչերն ու ողորումները շարունակվում էին արծարծվել և այն դարերում, երբ այդ երկրների ֆեոդալական կամ արքայական տներից և, մասնավորապես, Բագրատունյաց «փառքից» մնացել էին սոսկ ազգասիրական էլեգիայի առիթներ ընծայող ավերակներ: Ֆեոդալական Հայաստանում խոկ օտարատիրության դեմ ժողովրդի ազատագրական սկայքարը չէր գաղարում, երբ ազատագրական շարժման մեջ նվազում էր հայ ֆեոդալների դերը կամ, երբ հայ ֆեոդալները հակադրվում էին ժողովրդական մասսաների կամ ժողովրդական առաջնորդների ազատագրական նպատակադրումներին: Նման դեպքերում ազատագրական պայքարը սովորաբար ստանում էր գյուղացիական շարժման բնույթ և նրա դեկտիվարությունն անցնում գյուղացիության միջից ելած մարդկանց ձեռքը: Այսպես եղավ, օրինակ, 773—774 և 850—852 թթ. արարական տիրապետության դեմ բռնկած ազստամբության ժամանակ:

Փաստեր են սրանք, որոնք հավաստում են այն իրողությունը, որ նշ թագավորական դինաստիաները և նշ էլ ֆեոդալները չէին հանդիսանում ազատագրական պայքարի միակ զավանակները, միակ շարժիչ ուժերն ու

* Զեկուցված է Մատենագարանի VII դիտական սեսիային, 1954 թ. դեկտեմբերի 28-ին:

¹ Տես Ն. Աղոնցի «Բաղաքարական հոսանքները հին Հայաստանում» և «Բագրատունյաց փուռքը» հոդվածները, Բուտոնում լույս տեսնող «Հայրենիք» ամսագրի 1927—28 թթ. համարներում:

առա ջնորդները կամ պայքարի հետասլնդած նպատակների հետևողական կենսագործողները: Ժողովրդական մասսաները բժբխուանում էին ոչ միայն օտարատիրության գեմ, այլ երբեմն նայ իշխաղ վերնախավերի գեմ, որոնք հաճախ օրորփում էին օտարատիրության գեմ կազմակերպելիք շարժումը ձախողելու գեղքում ամեն ինչ կորցնելու և անվերապահ հնազանդության գնով իրենց ունեցվածքն ու իշխանության բեկորները վրկելու երկրնարանքի միջև:

Երբեմն հայ ֆեոդալական տները կամովին համակերպվում էին երկրի հին զավթիչներին կոմ որանց երեսից դիմադարձ լինում գեղի նոր նվաճողները, փոխարինելով օտարատիրության հին սիստեմը նորով: Այսպես լինում էր մանավանդ այն գեղքերում, երբ օտարերկրյա լծի գեմ ծավալված շարժումը վերածում էր գյուղացիական շարժման՝ ուղղված ֆեոդալական ճնշումների ու կեղեքումների գեմ առհաստրուկ, այդ թվում նաև շհայրենիք ճնշողների ու կեղեքուղների գեմ: Հաճախ այդ պայքարը զավախարական արձագանք էր գտնում ժողովրդական էպոսի մեջ կամ արտահայտվում ազանդավորական ուսմունքների ձեռվ և զրոնորվում որպես իշխող դասերի շահախնդրություններից, հավակնություններից ու ակնկալություններից տարրեր հասարակական-քաղաքական մտայնություն:

Հայ ժողովրդի և օտարերկրյա բնաւորիուրյունների հակամարտը մի կողմից, ժողովրդական մասսաների — գերազանցորեն գյուղացիության — և իշխող ֆեոդալիզմի հակամարտը, մյուս կողմից, միջնադարյան Հայաստանի պատմուրյան հիմնական հակամարտերն էին: Հայ ժողովրդի միջնադարյան ամբողջ պատմուրյունն ընթանում էր այդ հակամարտերի մեր մի, մեր մյուս ձեռվ:

Միջին դարերի հայ ազատագրական շարժումները ստանում էին սեփականցիոն շարժումների բնույթ, երբ պայքարի գլխավոր շարժիչ ուժը հանդիսանությունների վերաճելու ցոյցուն օրինակներ:

9—13-րդ դարերի բնթացքում Հայաստանի պատմությունը տալիս է համաժողովրդական ազատագրական շարժումները հակաֆեոդական ունեցուցիոն շարժումների վերաճելու ցոյցուն օրինակներ:

Այս մի դարաշրջան էր, երբ արտագրական ուժերի աճման հետևանքով երկրի գյուղատնտեսությունից արօնիում էր արհեստագործությունը և կազմավորվում էին ֆեոդալական Հայաստանի քաղաքները, որպես արհեստագործության և առևտրի կենտրոններ: Մի ժամանակամիջոց էր այդ, երբ ֆեոդալական փակ տնտեսությունը ձեղք է ստանում տեղական շուկաների միջամտությունից: Համակերպվելով ընդարձակվող ազգանքափախանակության պահանջներին՝ ֆեոդալ-կալվածատերերը գյուղահամայնքների հաշվին ընդարձակում էին իրենց հողային ֆոնդերը, սասակացնում գյուղացիների հարստահարումը, հողամրացման միջոցով լիակատար ճորտության մատնում շինականներին: Այս հանդամանքներում է ահա, որ օտարատիրությունից ազատվելու համար հայ գյուղացիների մղած պայքարը վերաճում էր հակաֆեոդալական շարժման, ստանալով ֆեոդալիզմին հակադրված ռուսացիոն օպոզիցիայիք բնույթ:

Հանրահայտ է Ֆր. Էնգելսի այն ցուցումը, թե միջին դարերի բնթացքում ֆեոդալիզմի գեմ ուղղված ուսուցչություն օպոզիցիան, նայած պայ-

ժամաներին, շհանդես էր գալիս մերթ իրրե միստիկա, մերթ որպես բացուրու հերետիկոսություն, մերթ որպես զինված ապստամբություն»¹:

9—13-րդ դարերի ընթացքում նման երեւյթներ կարելի է դիտել նաև Հայաստանում: Հատկապես 9—11-րդ դարերում Հայաստանի մի շարք վայրերում արծարծվում էին ժողովրդական-աղանդավորական շարժումներ՝ առաջին հերթին ուղղված «ֆեոդարական առկա հանրակարգի առավել ընդհանուր սինթեզի և սանկցիայի»՝ եկեղեցու դեմ:

Որպես ֆեոդալական հոգատիրության և գյուղացիության ֆեոդալական կեղեքման խոշորագույն կազմակերպություններից մեկը՝ իշխող իր գաղափարախոսությամբ հայ եկեղեցին հանդիսանում էր ֆեոդալական առկա հաստրակարգի դեմ եղած զիմագրությունը վանող խոշորագույն «հոգեսրազենքները»: Եկեղեցին սովորաբար նվիրագործում էր ամեն մի իշխանություն, և այդ թվում նույն իուկ օտարատիրության բոլոր զամանությունները, որպես աստվածային տնօրինություն և զատապարտում գրանց դեմ եղած ժողովրդական ամեն մի զիմագրություն: Նա արգարացնում էր ժողովրդին հանդիպած ամեն մի պատուհաս, որպես հավատացյալների «ծովացյալ մեղքերի» արդար հատուցում: Մարդկանց կրած ամեն մի անիրավության դիմաց նա լիաբուն վարձատրություն էր խոստանում միայն երկնքում:

Այլ ընթացք ուներ եկեղեցու իշխող զիրքավորմանը հակադրված «ուղուցիոն օպոզիցիան»՝ ժողովրդա-աղանդավորական շարժումը:

Հայ եկեղեցու դավանարանական հայացքներից խոտորող աղանդները նույնքան հին են, որքան և ինքը հայագավան եկեղեցին: Զհրաժարվելով ոչ աստծուց, ոչ կրոնից, աղանդավորները կամենենում էին կորդազրել հաւատքի գործերն առանց եկեղեցու միջամտության: Բայց եկեղեցու մերժման մեջ չէ, որ պիտի նշմարենք այս կամ այն աղանդի ուղղուցիոն դերը: Հավատացող համայնքների կամ անձերի և աստծու «անմիջական հազրակցության» միստիկական ուսմունքը ինքյան դեռ չի հանդեցնում եկեղեցու դեմ ուղղված ըմբռոտության:

Այսպես՝ մարզու և աստծու «անմիջական հազրակցության» գաղափարի շուրջն էր գառնում նարեկացու «Մատյան ողբերգությանը», սակայն անհնարին է ուղղուցիոն ըմբռոտության որևէ նշույլ նկատել այդ երկի մտայնության կամ նրա հեղինակի գործունեություն մեջ: Նարեկացին մեկն էր հայագավան եկեղեցու ուղղափառ վարդապետներից: Նա մեկն էր այն մարգկանցից, որոնք դատապարտում էին ուղղուցիոն օպոզիցիայի ընույթ ստացած աղանդավորական շարժումները և մեծարում դրանց կատաղի հալածիչներին, արար էմիրներին և կայսերական Բյուզանդիայի ինտերվենտներին: Նրա միստիկայի մեջ «սեղույցիոն օպոզիցիա» կարող են նշմարել միայն բանասիրության ֆորմալիստական զպրոցի դիտնականները, նրանք, ովքեր գրական գործիչներին որոշում են իրենց ժամանակի հասարակական-քաղաքական կոնկրետ միջավայրից կամ բռնածիր մեկնաբանություններով նրանց ու նրանց ժամանակակիցների ասույթներին վերագրում իրենց ցանկացած խմառը: Ոչ կրոնական միստիկան, ոչ էլ պաշտոնական եկեղեցու դավանարանությունից խոտորող աղանդը ինքյան դեռ համտզոր

¹ Յք. Էնգելս, «Գերմանական ուղղացիական օպոզիցիամբ», Երևան, 1934 թ., էջ 47:

չեն եկեղեցու կամ Նրա գալանաբանության դեմ ուղղված ուղղուցին օպոզիցիայի: Կրոնական միստիկան և գալանաբանական աղանդը պրոգրեսիվ նշանակություն են ստանում միայն այն գեղքերում, երբ կապվում են հակաֆեոդալական շարժման հետ, սրվում ժողովրդական մասսաների նյութական հարստահարման և հոգեոր ստրկացման դիմավոր լծակներից մեկի՝ միջնադարյան եկեղեցու դեմ:

* * *

9—11-րդ դարերի զարգացած ֆեոդալիզմի պայմաններում, Հայաստանում արծարծվող «ունույուցիոն օպոզիցիան» առաջարեղ եկավ քոնդրական աղանդի ձևով:

Այդ աղանդը ստացել էր իր անունը Վանա լճից հյուսիս ընկած Ապահովաց Թոնդրակ ավանից: Այդտեղ էր փոխադրվել և այդտեղից տարածել էր ուսմունքը աղանդի հիմնադիր Սմբատ Զարեհավանցին: Զարեհավանցու հայացքներն ու կարգադրություններն էին նախօրինակներ ծառայում ամենուրեք, ուր արձագանք էր գտնում Թոնդրակում արծարծված շարժումը:

Աղբյուրներն անորոշ կամ հակասական վկայություններ են պարունակում Զարեհավանցու երեման ժամանակի մասին: Թոնդրակյան շարժումը ուսումնասիրողները նրանց սկզբնավորումը դնում են 9-րդ դարի առաջին կեսում, մյուսներն այդ դարի վերջերին ու հաջորդ դարի սկզբաներին: Սակայն մինչև հիմա փորձ չի եղել հիմնավորելու թոնդրակյանների ծագման ժամանակաբանությունը, քննելու և պարզելու աղբյուրների մեջ հանդիպող հակասությունները:

Խոսելով Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի գահակալության մասին, որ տեղի էր ունեցել հայոց 346 (կամ մ. թ. 898) թվականին, իր նկարագրած անցքերից մեկ դար ուշ ապրած Ստ. Ասողիկը գրում է «Յաւուրս սորա երեկցաւ Սմբատ Թոնդրակաց առաջինն ի Զարեհաւան զեղչէ ի Շաղկուն դաւառէ, հակառակ ամենայն քրիստոնէական կարգաց»¹:

Ասողիկից անկախ մի այլ հեղինակ՝ 11-րդ դարի կեսերին՝ Գր. Մագիստրոսը, Զարեհավանցու երեմումը դնում էր «յաւուրս տեսան Յովհաննիսի և Սմբատայ Բագրատունւոյ»²: Շատերի մոտ ստացվել է այն տպավորությունը, թե Մագիստրոսը կրկնում է և հավաստում Ասողիկի վկայությունը. Սակայն այդ տպավորությունը չի ճշտվում թոնդրակյաններին վերաբերող այն տեղեկություններով, որ գտնում ենք Մագիստրոսի մոտ³:

11-րդ դարի ծուական թի. սկզբին, իր մի թղթում գիմելով թոնդրակյան ժամանակակից զեկավարներին, Մագիստրոսն ասում էր. «Պհարիւր և զեօթանասուն ամ երեքտասան քահանայապետք Հայոց Մեծաց, նոյնչափ

¹ Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885, եր. 160:

² Գր. Մագիստրոսի թղթերը, Արքանոդրապոլ, 1910, եր. 153:

³ Դժբախտաբար սխալ այդ տպավորությունից են ելել նաև վերջին տարիների բնացքում լույս տեսած Հայ ժողովրդի պատմության զույդ զասազրերի, պամիկելյանների կամ թոնդրակյանների մասին դրված դիսերտացիաների և առանձին հոդվածների հեղինակները: Սակայն այդ հեղինակի մոտ չենք գտնում իր պաշտպանած տեսակետի բանափիրական կամ սլատմաքննական որևէ հիմնավորում կամ պատճառաբանություն:

և Աղուանիցն և բիւր եպիսկոպոսք և անթիւ քահանայք և սարկաւագունք բողոքեցին ձեզ և ոչ լուայք. խօսեցան և յանդիմանեցին և ոչ պատկառեցայք, անիծեցին և արտաքսեցին և ոչ զղջացայք^{1:}

Նույն ժամանակներում գրած իր մի այլ թղթում Մագիստրոսն ասում էր, թե թոնդրակլյաններն շավելի քան զերկերիւր ամ ապականեալ զաշխարհս ամենայն, արձանացուցին զայնոգիսի ատրուշան իւրեանց վաւաշմութեանն^{2:} Սրան համապատասխան է գալիս, երբ նույն այդ ժամանակ Մագիստրոսն ասում էր, թե մինչև իր ժամանակը 15-ից ավելի հայկաթողիկոսներ բանագրել են թոնդրակլյաններին^{3:}

Կարող է թվալ, թե Մագիստրոսի տվյալների մեջ կա ակներև հակառաւթյուն: Եթե աչքի առաջ ունենանք, որ Մագիստրոսի մեջ բերած թրդթերը գրվել են 1050 թվականների սկզբներին, գուրս կզա, որ թոնդրակլյանների սկիզբը Մագիստրոսը դնում էր մի զեղքում 9-րդ դարի 70—80-ական թվականներին, մյուս զեղքում՝ նույն դարի 40—50-ական թվականներին: Սակայն փաստապես այստեղ չկա որևէ հակառաւթյուն: Գրելով թոնդրակլյանների ավելի քան 200-ամյա դոյության և ավելի քան 15 հայ կաթողիկոսներից բանագրված լինելու մասին՝ Մագիստրոսը նկատի ուներ ազանդի կազմագործան և հայ կաթողիկոսների նրանցից սահմանազատվելու սկզբնակետը, Մինչդեռ խոսելով թոնդրակլյանների դեմ տարված ավելի քան 170-ամյա պայքարի կամ հայ և ազգանից կաթողիկոսների կողմից նրանց աքսորվելու մասին, նա ելնում էր ազանդի դեմ ձեռնարկված ակտիվ հետապնդումների ժամանակակետից: Ըստ երեսութին թոնդրակլյանների սկզբնավորումը, կամ որ միենույն է Զարեհավանցու երեսումը, Մագիստրոսը դնում էր Հովհաննես Ովայեցի կաթողիկոսի (833—855)^{4:} և սրան ժամանակակից Սմբատ Բագրատունի սպարապետի օրերին (822—855): Վերջինս հայտնի է նաև Սմբատ Խոստովանող և Սմբատ Արլարաս կրկնանուններով:

Ծնդհակառակը, աչքի առաջ ունենալով թոնդրակլյանների դեմ սկզբած ակտիվ հալածանքները, Մագիստրոսն իջնում էր մինչև 9-րդ դարի 70—80-ական թվականները, այսինքն ոչ ավելի ուշ, քան Սմբատ Արլարասի որդու, իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու, հետագայում՝ Աշոտ Ա. Թագավորի ժամանակները:

Որ նշելով Զարեհավանցու երեսումը Հովհաննես կաթողիկոսի ժամանակ Մագիստրոսը նկատի էր ունեցել ոչ թե 9-րդ դարի վերջերին և 10-րդ դարի սկզբներին իշխած Հովհաննես Դրասխանակերտցուն, այլ 70 տարի առաջ գահ նստած Հովհաննես Ովայեցուն՝ պարզվում է նրանից, որ Մագիստրոսի թղթերի գրության ժամանակ գահակալող Պետրոս Գետադարձից ետ գնալով՝ Դրասխանակերտցին՝ պաշտոնական հաշվով ըստ հերթի, կլինի ոչ թե 15-րդը կամ 16-րդը, այլ 9-րդը (իսկ փաստական գահակալածներին հաշվելով՝ 11-րդը): Մինչդեռ պաշտոնական հաշվով Ովայեցին կլինի 13-րդը, իսկ փաստական գահակալածները հաշվելով՝ 15-րդը^{5:}

¹ Գր. Մագիստրոս, եր. 167. հմմտ. նաև եր. 154:

² Նույն տեղում, եր. 65:

³ Նույն տեղում, եր. 169:

⁴ Մ. Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, եր. 54:

⁵ Հետաղարձ հերթականությամբ դնույ ենք այս ժամանակներում գահակալած կաթողիկոսների անունները. 1) Պետրոս Գետադարձ, 2) Դիոսկուրոս, 3) Սարդիս, 4) Էաչիկ-

Պիտի կարծել, որ և Մագիստրոսը, և Ասողիկը թոնդրակյանների սկզբավորման կամ Զարեհավանցու երեման մասին իրենց հազորդած տեղեկանքներն առնում էին 10-րդ դարի կեսերին ապրած Անանիա Նարեկացուց, որի մեր ձեռքը չնասած աշխատությունը հիմնական աղբյուրն է եղել Զարեհավանցու կամ թոնդրակյանների մասին գրող միջնագարյան հեղինակների համար։ Հանդիպելով Անանիայի ժոտ տեղեկանք այն մասին, որ Զարեհավանցին երեացել է Հովհաննես կաթողիկոսի և Սմբատ Բագրատունու ժամանակներում, Մագիստրոսը ավել է դրան վերը նշված ուղիղ մեկնարանությունը. մինչդեռ Ասողիկը սխալաբար կարծել է, թե խոսքը Հովհաննես Դրասիանակերտցու և Սմբատ Ա. թագավորի մասին է։

Մեր այդ եղրակացությունը կարող ենք ճշտել նաև ուրիշ ավյալներով։ 13-րդ դարում ապրած Մխիթար Այրիվանեցու ժամանակագրության մեջ մ.թ. 821 թվի ներքո հանդիպում ենք այսպիսի հիշատակում. «Սրբաւատ Արլար[ա]սայ. սա է նախնին թոնդրակյացոց աղանդին»¹; Թոնդրակյան աղանդի սկզբնավորման մասին Այրիվանեցին հիշատակում է նաև Ստեփանոս Սյունեցու վկայարանության մեջ։ Նշելով Սմբատ Կյուրապաղատի մասին՝ Այրիվանեցին ավելացնում է, թե հայոց 270 թվականին, այսինքն մեր թվականության 822 թ. «ի համանուն թունէ որբա յայտնեցաւ աղանդըն թոնդրիկեցոց, յաւուրս Դաւթի կաթողիկոսի Կակաղեցոյք»². (Կակաղեցին Ովայեցու անմիջական նախորդն էր և գահակալել է 813—833 թթ.): Այրիվանեցու աշխատության մեջ Կյուրապաղատի թոռը՝ Սմբատ Արլարաւը հանդես է գալիս որպես Սյունեցու քաղկեդոնիկ հակառակորդ։ Ըստ երեսոյթին այն հանգամանքը, որ հայաղավան հեղինակների պատկերացումով քաղկեդոնականությունը հաճախ նույնպես որպես հերձված կամ աղանդէր նշվում, առիթ է ծառայել Այրիվանեցուն քաղկեդոնականության հարած Սմբատ Արլարաւին շփոթել թոնդրակյան աղանդի հիմնադիր Սմբատ Զարեհավանցու հետ։ Արձանագրելով Այրիվանեցու այս սխալը, պիտի կարծել այնուամենայնիվ, որ նրա պատկերացումով ևս 822—855 թվերին Հայաստանում իշխած Սմբատ Բագրատունին և որա ժամանակ գահակալած Դավիթ Կակաղեցի և Հովհաննես Ովայեցի կաթողիկոսները և Թոնդրակում ծայր տռած աղանդի հիմնադիր Սմբատ Զարեհավանցին ժամանակակիցներ էին։

Ի՞նչ աղբյուրից կարող էր քաղած լինել իր տեղեկանքը Այրիվանեցին։ Այրիվանեցուն աղբյուր էր ծառայել Ռւխտանեսի Պատմության մեր ձեռքը չնասած երրորդ մասը, ուսիից նաև առնում էր հունակավան հայերի («ծագերի») մասին հազորդած, այլ աղբյուրներում չհանդիպող, իր տեղեկությունները։ Եթե նկատենք, որ տասներորդ դարում աղբած Ռւխտանեսը Անանիա Նարեկացու ամենամերձավոր աշակերտն ու հետեւորդն էր, դժվար չէ ենթադրել, որ Ռւխտանեսը ևս ձեռքի տակ ուներ նրա դիրքը։ Ռւստի և

5) Ստեփանոս Գ., 6) Վահան, 7) Անանիա, 8) Եղիսէ, 9) Թեոդորոս, 10) Ստեփանոս Բ., 11) Հովհաննես Դրասիանակերտցի, 12) Մաշտոց, 13) Գեորգ Բ., 14) Զարարիա, 15) Հովհաննես Ովայեցի, 16) Դավիթ Կակաղեցի։

¹ Մխիթար Այրիվանեցի, ն. ա., եր., 54:

² Գ. Հովհաննիսյան, Մխիթար Այրիվանեցի, նորագիւտ արձանագրութիւն և երկեր, Երևանպետ, 1931, եր., 19:

պատահական չէ, որ Աւելանեսից օդոված Այրիվանեցու ավյալները հիմնականում համբուկնում են Մագիստրոսի հաղորդածի հետ:

Ի վերջո հնարավոր է ճշտել Զարեհավանցու երեման կամ թոնդրակյան շարժման սկզբնափորման հարցը մի այլ, ավելի շահափելի կովանի օդությամբ, որը մինչ հիմտ խուստիւլ է բանուուրների ուշադրությունից:

Կճավա ուխտին Գր. Նարեկացու հղած թղթում մեծարվում է ԱրքՎարդ ամիրա անունով մեկը, թոնդրակյանների զետ զաման հալածանք ձևանորկելու և նրանց առաջնորդներին «խայտառակաման» անելու համար¹:

Արար աղբյուրները նշում են կայսիկ Արուլ-Բարդին որպես այն ուղարկատորներից («մութաղակիրներից») մեկին, որոնք, օդովելով խալիքաթի թուրացումից, 9-րդ դարի 30-ական թվականներից հետո իշխանություն էին հափշտակում այս կամ այն երկրամասում՝ վաստական անկախություն ձեռք բերելով արարական կենտրոնից: Արար պատմիչ Յակուբիի վկայությամբ Ապահունյաց վերջական նոտոցն այդ ժամանակ Մանազկերաքաղաքն էր²: Կոստանդին Շիրանտին կայսրը հիշատակում է Մանազկերտում նոտած Արուլ-Բարդին որպես «իշխանաց իշխան» Աշոտ Բագրատունուն և նթարկված վասալի³: Թոմա Արծրունու մոտ նա հանդես է գալիս որպես Ապահունյաց երկրում իշխող արարական կայսիկ ցեղին պատկանող մի բռնավոր «Արքա» ամիրա: Պատմիչը նշում է նրա իշխանության կենտրոն Մանազկերտի պաշարումը իշխանաց իշխան Աշոտի ձեռքով⁴, զետք, որ պիտի տեղի ունեցած լինի Աշոտի թագադրությունից, այսինքն 884 թվականից, բավականին տապած:

Եթե թոնդրակյան շարժման և հատկապես նրա առաջնորդների զետ պայքարում էր արար մի բռնավոր, որ իշխում էր Մանազկերտում 830 թ. հետո, մինչև նույն դարի 70—80-ական թվականները՝ լիակատար հիմք կապնդելու, թե Զարեհավանցու երեսումը չէր կարող տեղի ունեցած լինել 9-րդ դարի վերջերին՝ Հայտնինեա Դրասիանակերտցու կամ Ամրատ Ա. Բագրատունու ժամանակը: Վերը բերած բոլոր վաստերը վկայում են, բնորու-

¹ «Գիրք թղթոց», եր. 500 և հաջ.

Այլուստ հանդիպած լինելով ԱրքՎարդ ամիրայի անվան, մխիթարյան բանասեր Բ. Սարգիսյանը թոնդրակյանների ուսումնասիրմանը նվիրած իր աշխատության մեջ — որ ինչպես հայտնի է, հանդիսանում է զիտական թյուրիմացությունների մի շեղջակույտ — փորձում էր այդ անվան տակ նշված ամիրայի մեջ տեսնել 10-րդ դարի վերջերին առլրած Դվինի Արլ-Հաճ էմիրին, նույն ժամանակ Ասորպատականում իշխան Արլ-Տլուփին կամ սրանց ժամանակակից այլ որեւէ անձիք, որի անունը իրը, ինչպես նա ենթադրում է՝ «ամիրա» և վարդ թարգմանած է» (Բ. Սարգիսյան, «Ուսումնասիրությունն մանիքեա-պավղիկյան թոնդրակեցիներու աղանդինք», Վենետիկ, 1893, հմմ. եր. 69, 71 և 110): Այդ ենթադրությունները անհիմն են, կամայական և զուրկ իմացողական որեւէ արժեքից: Գր. Նարեկացու հիշատակած ԱրքՎարդ ամիրան այլ որ չէր, քան 9-րդ դարի կեսերին Հայաստանի հարավում՝ Ապահունիքում իշխան կայսիկ բռնավոր էմիր Արուլ-Բարդը: Ի դեպք Նարեկացու զործածած «ԱրքՎարդ» ձեռք այդ անունը հանդիպում ենք նաև արար հեղինակներից մեկի, Իրն-ալ-Ասիրի մոտ (Խին-ալ-Ասիր, Տարիք-ալ-Կամիլ, Բակու, 1940, եր. 107):

² Հմմ. Պ. Կ. Ջոզե, «Մուգալիբы в Закавказье в IX—X вв.», տես «Материалы по истории Грузии и Кавказа», вып. III, Тбилиси, 1931, եր. 180:

³ Constantinus Porphyrogenitus. De administrando imperio, ed. Bonn., p. 192.

⁴ Թոմա Արծրունի, «Պատմութիւն տանն Արծրունեց, Գևորգուրդ», 1887, եր. 216 և 225:

կրտակը, այն մասին, որ թոնդրակյան աղանդապետի գործունեությունը ոկտոված պիտի լինի շատ ավելի առաջ՝ Սմբատ Բագրատունի սպարապետի և Դավիթ Կակաղեցի և Հովհաննես Ռվայեցի կաթողիկոսների ժամանակ և ավարտված նրա նահատակումով՝ Մանազկերտում իշխան Արլ-Բարդ էմիրի տիրապետության շրջանում:

Կոստանդին Շիրանածինը հիշատակում է նաև իրեն ժամանակամերձ մի այլ էմիր Արլ-Բարդի՝ մեր հիշատակածի վերջին շառավիղներից մեկի՝ անունը¹: Այս էմիրը իշխում էր 10-րդ դարի 80-ական թվականներին. դա Ազահունյաց և Նփրկերտի այն իշխողն է. որի անունը Ասողիկի մոտ պահպել է «Բատ ամիրա» ձևով²: Եթե Զարեհավանցու պատուհասողին նույնացնելու լինենք այս ամիրայի հետ, հարկ պիտի լիներ թոնդրակյան շարժման սկիզբը հետ քաշել մինչև մեկ կամ մեկուկես դարով: Դրանով անտեսած կլինեինք ոչ միայն Մագիստրոսի կամ Այրիվանեցու, այլև Ասողիկի հաղորդած տվյալները, քանի որ այդ գետքում եթե Զարեհավանցին գեռ կարող էր դիտվել որպես Սմբատ Բ. Բագրատունի թագավորի ժամանակակից, ապա անհնար պիտի լիներ նշել նրա ժամանակ գահակալած որիէ Հովհաննես կաթողիկոս: Մնում է, ուրեմն միակ հնարավոր եղբակացությունը՝ այն, որ Զարեհավանցուն ժամապատճող Արլ-Բարդը, այլ ոք չէր կարող լինել, քան Մանազկերտի ուղուրապատորը: Այս եղբակացությունը հնարավորություն է տալիս մեզ նաև տեղադրել Զարեհավանցու մահվան մոտավոր եղբերը 9-րդ դարի 30—40-ական թվականներին:

Այսպիսով, անակնկալ այս փաստարկը ևս գալիս է համաստելու Գր. Մագիստրոսի և Մխիթար Այրիվանեցու ձեռքով մեզ հասած վկայությունների ձշտությունը:

* * *

Զարեհավանցու. Քարոզչության հանդիսացած թոնդրակը գտնվում էր Մանազկերտից ընդամենը 3 ժամվա հեռավորության վրա³: Այստեղից հասկանալի է թոնդրակյանների գեմ Ազահունյաց էմիրի զաման պայքարը:

Պիտի կարծել, որ թոնդրակյանների հետապնդումը Արլ-Բարդը ձեռնարկեց մի ժամանակ, երբ բավականաշափ աճել էր արդեն շարժումը և դրսեսրել իր վտանգավորությունը ոչ միայն հայ եկեղեցու, այլև Ազահունիքում իշխող բոնապետության համար: Ճիշտ է, ակնարկելով Արլ-Բարդի և թոնդրակյանների «գրացիությունը» և ելնելով քրիստոնեական անհանդուրժամտությունից, Գր. Նարեկացին երկուսին էլ համարում է հեթանոս մոլեգնության ներկայացուցիչներ. Արլ-Բարդը Նարեկացու կարծիքով շմերձ էր և դրացի դառնացողացն մոլեգնության⁴: Այնուամենայնիվ ատելությամբ լցված դեպի թոնդրակյանները՝ Նարեկացին պատրաստ է ընկնել նույնիսկ նրանց գեմ սուր բարձրացրած մոլեգին այդ հեթանոսի գիրկը:

Գր. Նարեկացու վկայությունից դատելով կայսիկ էմիրներն արգենիսկ Արլ-Բարդի ժամանակ պայքարում էին թոնդրակյանների գեմ հայ կղե-

¹ Const Porph., Առևյն տեղում, եր. 193:

² Անօդիկ նույն անեղութեան Գոյ գիր, 24:4; 33:3 Տալլութեան մուտքածութեան մասին:

³ Մանազկերտի Աշխարհական գրաւթիւններ, եր. 332: Հայութեան մասին:

⁴ Գիրք թղթոց, եր. 500:

րի և ֆեոդալների հետ ձեռք ձեռքի տված։ Գր. Նարեկացին համարում էր հայ եկեղեցու պաշտպանությունը ստանձնած մուսուլման էմիրին «այլ հզօր», «խնդրող վրիժուց նախատանացն Քրիստոսի», «արդարեւ գաւազան սրամտութեան ի ձեռն տեսոն Յիսուսի»¹։

Բատ Նարեկացու՝ Արլ-Բարդը սպանեց ինքնակոչ «Քրիստոսին» — իմայ Զարեհավանցուն — տսելով թե սպանված Քրիստոսը երեք օրից հարություն առավ, եթե ինքնակոչը հարություն առնի նույնիսկ 30 օր հետո՝ ինքը կհավատա, որ նա իրոք Քրիստոս է։

Ի՞նչն է հակադրել Արլ-Բարդին վրեժխնդիր լինել Քրիստոսի համար։

Ինչպես վկայում են աղբյուրները, թոնդրակյանները մերժում էին քրիստոնեական եկեղեցու նվիրապետությունը, եկեղեցու շխորհուրդները, նրա հետեւրդների խաչապաշտությունն ու ծխակատարությունները։ Ինարկե, Նարեկացին չեր ուզում առել, թե մուսուլման էմիրը պատյանից հանում էր իր սուրբ հայ քրիստոնյա եկեղեցու նվիրապետությունն ու շխորհուրդները, նրա գավանաբանությունն ու ծխակատարությունները ստանարող աղանդապետից վրեժխնդիր լինելու համար։ Կճախու ուխտին ուզում իր թղթի մեջ Նարեկացին առանձնապես շեշտում է Զարեհավանցու անվան հետ կապված մի այլ մեղադրանք։ Թոնդրակյանները, առում էնա, շղթիսաւոր աղանդին իւրեանց գարշութեանն յանդդնեալ Քրիստոս անուանենք², այսինքն՝ նրանք իրենց աղանդապետին, առել է Զարեհավանցուն, «Քրիստոս» են կոչում։ Այս, ինարկե, չի նշանակում թե թոնդրակյաններն աստվածացնում էին իրենց կրոնապետին, այլ որ մարդկայնացնելով Քրիստոսին, նրանք նույնացնում են «Քրիստոս» և «կրոնապետ» հասկացությունները։ Թոնդրակյանների այս հայացքը Նարեկացին համարում էր «մարդապաշտ ուրացութիւն», որ գարշելի է և անիծեալ քան զկուապաշտութիւնք³։

Նարեկացու վկայությունից կարելի է, թերեւ, գալ այն եզրակացության թե Արլ-Բարդի զայրույթը Զարեհավանցու զեմ բորբոքել էր հենց թոնդրակյանների այս հայացքը։ Սակայն գժվար է հավատալ նաև, թե մուսուլման էմիրը կարող էր մահապատճել հայ մի կրոնապետի հենց այն բանի համար, որ նա ժխտում էր Քրիստոսի աստվածությունը կամ որ, ինչպես պիտի տեսնենք հետո, այդ կրոնապետը Քրիստոսին համարում էր սոսկ շմարդաբեն, այսինքն պնդում էր նույնը, ինչ պնդում էր նաև իսլամի հիմնադիրը։ «Մեսոլյուցիոն օպոզիցիայի» և իսլամի գավանաբանության մեջ եղած ձեւական այս նմանությունն էր հենց, որ հիմք կարող էր տալ Նարեկացուն խոսել նրանց հայացքների «մերձավորություն» մասին։

Նարեկացու վկայությունից առաջ եկաղ տարակուսանքը հնարավոր է լուծել, եթե հաշվի առնենք գործնական այն հետեւթյունները, որ անում էին թոնդրակյաններն իրենց ուսմունքից։ Ինչպես նշում է Մագիստրոսը, թոնդրակյաններն առում էին, թե իրենք նյութապաշտ չեն, այլ աստվածապաշտ։ Պաշտելով անտեսանելի և անշոշափելի առածուն, նրանք մեր-

¹ Նույն աեղում, եր. 498 և 500։

² Գիրք թղթոց, եր. 500։

³ Նույն աեղում, եր. 499։ Ի դեռ Քրիստոսին մարդկայնացնելու մասին վկայում էր նույն 12-րդ զարի եկեղեցական մատենագիր Պողոս Տարոնեցին առևտուցքում՝ չը այն մասին, թե թոնդրակյաններն «ասեն թէ լոկ մարզն եր Քրիստոն» (ՀԱՅՈՒՅՄԱԿԱՆԱԴՐԱՅԱ, ձեռ. 5787, թ. 294թ)։

ժում էին տեսանելի և շոշափելի խաչը, եկեղեցին, եկեղեցական զգեստները, եկեղեցական «խորհուրդների» անունով՝ նվիրագործվող պատարագագործությունն ու եկեղեցական մյուս ծիսակատարությունները¹:

Մերժելով «նյութականը»՝ նրանք մերժում էին ոչ միայն հոգեսր, այլև աշխարհիկ իշխանության տիրող սիստեմը: Իրենց հոգեսր և աշխարհիկ գործերը զեկավարելու համար նրանք ձանաշում էին միայն համայնքների միջից առաջացած «ինքնակոչ» (առել է՝ չձեռնադրված ու չթագադրված) տոաջնորդների հեղինակությունը²: Հակադրվելով առկա կարգերին՝ նրանք սահմանում էին և պաշտպանում նոր, արդար համայնքաբարդ:

Թոնդրակյանները, զրում էր Մագիստրոսը, անհոգաբարձ թողեցին Քրիստոսի հոռք «ի հովուապետաց, յարքայից և յիշխանաց և ի բոլոր գրեթէ ի մարդկունէ»³: Նրանք տարրերինում էին մյուս հայերից, որոնք ապրում էին հին կամ իշխող օրենքների համեմատ, «ոչ են համեմատ (նոցա) և ոչ միով իւիք, այլ հակառակ»: Նրանք ծաղրում էին հին ու նոր բոլոր օրենքները, քանի որ «ի բոլոր օրենսդրութիւնու իւրեանց ամեններն արտաքս են հին և նոր օրինաց»⁴:

Նարեկացուն զայրացնում էր իրեն ժամանակակից թոնդրակյան ուսումնական Մուշեղի այն պնդումը, թե ու գրոց մեջ նզովք չկա («յոր գրոց ունին նզովէլ ոքք—հարցնում էր Մուշեղը»)⁵: Թոնդրակյան ուսումնականը գրանով ոչ միայն հերքում էր թոնդրակյանների գեմ ուղղված բանագրանքների օրինականությունը, այլև մերձենում կըսնական հանդուրժամտությանը, շոշափում դիտության ու հավատքի ազատության սկզբունքը: Նրան ուսուրկող նարեկացին ընդհակառակը, պաշտպանում էր խորապես ուսակցիոն այն հայրացքը, թե «դիտութիւն ոչ աւժանդակեալ մտամբն աստուծոյ, ձայն է անընդրական անյարմարագէս ազգեցիւալ և պատզամ է նենդուկան խոփունիչ խաղաղութեան»⁶: Այսուղ գիտությունը ոչ միայն ընկալվում էր որպես աստվածային կամքի հայտնություն, այլև ծառայեցվում որպես իշխող գաստկարդի անդորրությունը պահպանելու միջոց ու այդ անդորրությունը խափանողներին ստուկու զենք:

Թոնդրակյանները չեին ձանաշում «խորութիւնք արանց և կանանց, և ոչ ընտանեաց»⁷: Վերջին վկայությունը ցույց է տալիս, թե նրանք սուհանջում էին ոչ միայն կանանց և տղամարդկանց, այլև մարդկանց բոլոր մյուս դասակարգութեանը ու տարրերակութեարի իրավահավասարություն և կամ որ միւնույնն է՝ գյուղական համայնքների, եկեղեցու և կարվածառերի արամագրության տակ գտնված նյութական բոլոր բարիքների և առաջին հերթին՝ գարեւահողերի, արոտավայրերի, անտառների և ոռոգման միջոցների հավասար վերաբաշխում: Այս առումով պիտի կարծել, որ թոնդրակյանները հակառակ վերաբաշխում էին հայ եկեղեցու կողմից նվիրագործված անհավասարության սկզբունքին: «Որոյ շատ է ժառանգութիւն, — ասված է

¹ Գր. Մագիստրոս, եր. 157:

² Նույն տեղում, եր. 154:

³ Նույն տեղում, եր. 65:

⁴ Նույն տեղում, եր. 160:

⁵ Գիրք թղթոց, եր. 502:

⁶ Նույն տեղում, եր. 501 և հետո:

⁷ Մագիստրոս, նույն տեղում, եր. 160:

հայ եկեղեցու կանոններից մեկում,— զշատն կերիցէ, որոյ սակաւ՝ զակաւն կալցի. և մի բատ ծխոյ բաժանեցեն զշնորհն, զի ժառանգութիւն սրբոյ եկեղեցւոյ իրքեւ զազատութիւն է...²:

Սատծուն մերձեցնելով մարդուն և երկինքը՝ երկրին, թռնղրակյանները ժխտում էին հանդերձյալ կյանքն ու հոգու անսահությունը: Նրանք ժխտում էին հանդերձյալ կյանքի հնարավորությունը, հետեարար և չէին բնդունում երկնային հատուցում կամ պատիճ մարզկանց երկրավոր գործողությունների համար: Մարդու փրկումը նրանք որոնում էին այս կյանքում: Երկնաքի արքայությունը պիտի կառուցվի երկրի վրա: Երկրի վրա է, որ պիտի ստեղծվի արգար համայնակենցաղ, վերացվի ամեն մի բռնություն, անիրավություն և կեղեցում: Այս ամենը պիտի կատարվի իրավահավասար հավատացյալների ձեռներով, առանց եկեղեցու շխորհուրդների առանց եկեղեցական նվիրագետության և ֆեոդալ իշխանության միջամտության:

Թռնղրակյանները ոչ միայն քարոզում էին իրենց հայացքները, այլ և խոսքից անցնելով գործի, ջանում էին կենսագործել դրանք: Այս թե ինչու նրանց դեմ զինվեցին ոչ միայն հայ եկեղեցու պետերը, այլև հայ քաղաքական իշխանության ներկայացուցիչները: Ծավալվող շարժման դեմ իրապարակ էին գալիս նույնիսկ օտար զավթիչները: Այս մասին է վկայում քաղաքական այն հալածանքը, որ ձեռնարկեց թռնղրակյան աղանդապետ Մարտ Զարեհավանցու զեմ Մանաղկերով ուզուրատորը՝ կայսիկ բռնավոր էմիր Արլ-Բարզը:

* * *

Եինելով հիմնականում գյուղացիական շարժում, իր զարգացման հետագա էտապներին թռնղրակյան շարժումը ներգրավում էր մանր աղնվականության և ստորին կղերի զժգոհ ուսորեներին և ի վերջո, ինչպես համոզիչ կերպով նշնչեց վերջերս — նկատի ունենք ընկլ. Ա. Մնացականյանի շահնեկան հռվիտձը² — նաև հույների զեմ սաքի երած Անիի քաղաքացիներին:

Պիտի դիտենք, սակայն, որ ինչպես հայ պավլիկյանների, այնպես և զրանց հաջորդած թռնղրակյանների շարժումը սկզբից և եր կրել է ոչ միայն սոցիալական, այլև քաղաքական շարժման բնույթ: Իրրե ֆեոդալիզմի զեմ ուղղված ուկուցիչն օպոզիցիտ այդ շարժումներն ուղղված են եղել ոչ միայն արտադրական առկա հարաբերությունների, այլև երկրում իշխող քաղաքական վիճակի զեմ, հարկ եղած զեպքում շուռ գալով նաև Հայաստանի նվաճողների՝ արարների ու բյուզանդացիների զեմ: Հայաստանում իշխած օտարակալության զեմ ուղղված քաղաքական շարժման երանդ ուներ թռնղրակյան աղանդն բատ երկույթին տակալին Մարտ Զարեհավանցու ժամանակ:

Մարքսիզմն ուսուցանում է, որ զառակարդացին հասարակության մեջ ամեն մի սոցիալական պայքար ունի իր քաղաքական երանդը. որվելով տիրող իրավակարգի զեմ, զառակարդացին հակամարտը հանդում է ոչ մի-

¹ Ա. Դանյան, «Կանոնադիրը հայոց», եր. 123:

² Ա. Մնացականյան, «Թռնղրակյան շարժման մի բանի պիտագոր հարցերի մասին», Գիտ. ակուլ. «Տեղեկալիր», Ն 3, 1954, հմ. եր. 78—80:

այն սոցիալական, այլև քաղաքական օպոզիցիայի: «Քաղաքականությունը, — գրում էր Վ. Իենինը, — էկոնոմիկայի խոացված արտահայտությունն է»¹: Անդրադառնալով ժաղովրդա-աղատագրական շարժումներին, — Վարդիմիր Իլյիչը ուղղակի տառմ էր, «քաղաքական բողոքի հանդես դալը կրոնական կեղեկի տակ մի երեսությ է, որը հատուկ է բոլոր ժողովուրդներին՝ Նրանց զարգացման որոշ աստիճանի վրա»²:

Թոնդրակյան շարժման սկզբնավորման ժամանակաբանական ֆիքսացիան հնարավորություն է տալիս պարզելու Զարեհավանցու արտահայտած ոչ միայն սոցիալական, այլև քաղաքական բողոքի իմաստը: Ժամանակագրական այդ փոնի վրա ակներեւ է դառնում այն իրողությունը, որ Զարեհավանցին ոչ միայն 9-րդ դարի առաջին կեսում հայ աշխատավորության մղած աղատագրական պայքարի զեկավարներից մեկն էր, այլև պատմական նշանավոր մի գեմք, որ կարեար գեր է կատարել 9-րդ դարի առաջին կիսում Առաջավոր Ասիայում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների մեջ:

Հայտնի է, որ 7-րդ դարի կեսերից մինչև 8-րդ դարի սկիզբը՝ արարների իշխանությունը ձևական բնույթ ուներ Հայաստանում: Պատահական չէ, որ թոնդրակյաններին զաղափարամերձ պավլիկյան շարժումը, որ արձարծվում էր Հայաստանում տակավին 6—7-րդ դարերում, գլխավորապես կենտրոնացած էր Երկրի այն մասերում, որոնք սահմանակից էին Բյուզանդիային կամ գրավված նրա կողմից: Քաղաքական իր բարձրագակությամբ հայ պավլիկյանների գործունեությունն ուղղված էր կայսերական ագրեսիայի դեմ: Հատկանշական է, որ մինչև 7-րդ դարի վերջերը արարիշտողները ոչ միայն չեին հալածում հայ պավլիկյաններին, այլ գուցե նաև հովանավորում էին նրանց: 8-րդ դարի սկզբներին Հայան Օձնեցին նրանց մեղադրում էր այն բանում, որ «քրիստոնասերների» (իմա՝ Բյուզանդիայի) դեմ նրանք խողխողիչ զենք էին դարձնում «թլպատված բռնակալներին»— արարներին— դաշինք կնքելով սրանց հետ:

Այս գրությունը հարստե շնորհվ. 725 թ. Հայաստանում և Ազգանքում վերացնելով ծխահարկի սխառեմը, խալիքաթը մացրեց գլխահարկի, անասնահարկի և հողահարկի սխառեմ, որով ծանր գրություն ստեղծվեց հպատակ գյուղացիության համար³: Հետզհետե սաստիանում էին արար սատիկանների ու էմիրների վարչական ձնշումներն ու ֆինանսական հարբուտարումները և համապատասխան կերպով ուժ ստանում նաև հայ ժողովրդական մասսաների կողմից խալիքաթի բռնատիրությանը ցույց տված գիմաղրությունը: Արտահայտելով հայ աշխատավոր մասսաների արամագրությունները՝ պավլիկյանները պայքարի հակատ են բացում խալիքաթի դեմ:

Հայաստանում կուտակված դժոհությունները 748—750 թվականներին առիթ են տալիս Գր. Մամիկոնյան սպարապետին խալիքաթի դեմ պայքարելու համար մարտական ուժեր համախմբել Տայքում: Տայքում

¹ Իենին Վ., Երկեր, հատ. 32, եր. 88:

² Եռւյնը, հատ. 4, եր. 305:

³ Ղենդ, նույն տեղում, եր. 100 և հետ., և Մ. Կաղանիատվացի, նույն տեղում, եր. 368:

համախմբված այդ ուժերը պաշտպանության ամսուր թիկունք դառն Բյուզանդիայում՝ Կոստանդին Ե. Կոսլոռնիմ կայսրի կողմից:

Հայոտնի է, որ գրոհելով վանական կալվածատիրության վրա Առաջ Գ. Իսավրացի (717—740) և Կոստանդին Ե. Կոսլոռնիմ (740—775) պատկերամարտ կայսրները ժամանակավոր դաշինք կնքեցին պավլիկյանների հետ Պայքար սկսելով խալիֆաթի դեմ՝ Հայաստանի արարական երկրամասերում գտնված ոլավլիկյանները պատրաստակամություն են հայոտնում միաւնալու Տայքում համախմբված ուժերին: Այս մասին ուշագրավ մի տեղեկություն է պահպանված Առողջ պատմիչի մոտ: Հաղորդելով Գր. Մամիկոնյանի գլխավորությամբ Տայքում համախմբված ուժերի մասին՝ Առողջը գրում է. «Եւ ամենայն որդիք յանցանաց երթեալք խառնէին ի գունդ ապստամբութեանն, որք ոչ ճանաչէին զերկիւղն աստուծոյ և ոչ զան իշխանաց և ոչ զպատիւ ծերոց, այլ իրրե այլազդի և օտարացեալ՝ ասպատակ սփռեալ զերէին զեղրայրս և զազդակիցս իւրեանց, և բաղում աւարառութիւնո առնէին, խոշտանգանաւ և գանիւք տանջանս ածեալ ի վերոյ եղբարց իւրեանց¹: Վերջիրս երիտասարդ բյուզանդուկեատ Հ. Բարթիկյանը համագրելով Առողջի տողերը հունական ազրյուրների մատակարարած որդյալների հետ, համողիչ կերպով ցույց տվեց, որ հայ պատմիչի հիշատակած հանցանաց որդիները, որոնք ոտքի էին ելնում ոչ միայն արար օտարատիրության, այլև ասուծու իշխանների և իրենց իսկ եղբայրակիցների ու ազգակիցների դեմ, կարող էին եղած լինել միայն հայ պավլիկյանները²: Բնորոշ է, որ, ինչպես հազորդում է Առողջը, «հանցանաց որդիների» երկյուղից ավատամբ հայերի միասնությունը երկիւղիվում է: Շարժումը գլխավորած նախարարները նպատակահարմար են գտնում ևս կենալ ապրատամբությունից, հավատարմություն հայոտնել խալիֆաթին և հարկ վճարելով արարներին, կորսարի վտանգից փրկել իրենց դույքերը կամ ինչպես ասում էին իրենք՝ «և կալցուք զստացուածս մեր, զայդիս, զանտաս և զանդաստանս մեր»:

Առողջի հազորդածից աւելներե է միանգամայն, որ «հանցանքի որդիները» կամենում էին ազատվել ոչ միայն խալիֆաթի պարտազրած նոր տուրքերից, այլ հայ ֆեոդալների ու եկեղեցականների կալվածատիրական կեղեքումներից: Հառկանալի է, թե ինչու մասնավորապես հայ եկեղեցականները ակտիվ պայքար էին սկսել նրանց գետ տակավին 720 թ. Հովհան Օձնեցու կազմակերպած Մանազկերտի ժողովում: Որչափ Տայքում սկսված շարժման մեջ սկսում էին ազգեցություն ձեռք բերել Առողջի ակնարկած հանցանքի որդիները — պավլիկյանները — շարժումը սպառնում էր վերածիւ հակաֆեոդարական ավատամբության և հասկանալի է, որ ինչպես բյուզանդական որոշ ավյալներից եղբակացնում է Բարթիկյանը, պավլիկյանների գործակցությունը մերժվեց նույնիսկ Գր. Մամիկոնյանի կողմից:

Զրդ գարի առաջին կեսերին Հայաստանում ծայր առնող և հետզնետե ծավալվող թռնդրակյան շարժումը հանդիսանում էր նույն այդ ժամանակ Հայաստանի արևելյան գավառներում ծավալվող հակաարարական շարժում՝

¹ Առողջ, նույն տեղում, եր. 123:

² Г. Бартикан, «К вопросу о павликянском движении в первой половине VIII века» (հեղինակի թույլտվությամբ օգտվում ենք նրա ուսումնասիրության ձեռագրից):

Ների արտահայտություններից մեկը: Տեսանք, որ նախապես թոնդրակյան շարժումը տարածվում էր հենց Ապահովնիքում և սրատահական չէ, որ նրա գեմ մզված պայքարին մասնակցում էին ոչ միայն հայ կաթողիկոսների նզուվալից կոնդակները կամ հայ աստվածաբանների հայրոյալից «հերքումները», այլև Մանաղերտում նոտած արար ուղուրապատորի սաստիչ սուրբ: Այս երեսութքը ուներ հարկավ խոր այն պատճառը, որ թոնդրակյան շարժումը սոսկ հայ եկեղեցու դավանաբանության դեմ ուղղված մի աղանդ չէր, կամ սոսկ հայ ֆեոդալների դեմ բորբոքված գյուղացիական մի հոգմունքը Բոլոր նշաններից գատելով, սկզբից և եթ դա մի շարժում էր, որը դադափարական իր բովանդակությամբ չէր ամփոփված հայ կյանքի նեղ շրջանակներում և հետապնդում էր նպատակներ, որոնք ներհակում էին ոչ միայն հայ տիրող գատերի, այլև Հայաստանի նկատմամբ քաղաքական հոգվակնություններ ունեցող գրուել բոլոր ուժերի շահերին ու նպատակագրումներին:

* * *

Զարեհավանցու ժամանակը որոշելու համար բավական չէ առաջ քաշել սոսկ վերը հիշատակված ժամանակաբանական կույանները կամ հաշվի առնել Հայաստանում իշխած սոցիալ-քաղաքական կոնկրետ այն իրազրությունը, որ ոնաև նախապայմաններ էին ստեղծում նրա գործունեության համար: Զարեհավանցու ժամանակը որոշելու համար հարկ է վերապատկերել նրա տարած բնորդանուը պատմական մթնոլորտը, մասնավորապես շրջափել իդեական այն կապերը, որոնք կարող էին աղբյուր հանդիսանալ նրա քարոզած հայացքների կազմավորման համար: Եթե ոչ այս հարցը լուծելու, գեթ գրա լուծմանը մերձենալու համար է հենց, որ մեղ պիտի զրադեցնի ոչ միայն Զարեհավանցու ժամանակի, այլև նրա ժամանակակիցների շրջանը որոշելու խնդիրը:

Գր. Մագիստրոսի մի թղթից տեղեկանում ենք, որ Զարեհավանցին ջանում էր միտվորել իր ժամանուկ կամ իրենից առաջ եզած աղանդավորական խմբավորումները և հանդեռ գուլ որպես զրանց բոլորի համար հեղինակավոր կազմակերպիչ և օրենսդիր: «յամենեցունց,—գրում է Մագիստրոսը,—զթոյնս չարութեան ի մի վայր ժողովեալ հերձուածս, հաւանեցան այնմ աստուածամբար և ցանկապատառ գիւամոլի անօրինին Սմբատայ օրէնս դնել...»¹:

Նախառովնետական շրջանի հայ և օտար բանասիրության մեջ որոշ աշխատանք կատարվել է թոնդրակյանների և նրանց նախընթաց հայ աղանդների գաղափարական կապերը բացահայտելու համար: Դժբախտաբար բոլոր այդ ուսումնասիրությունների մեջ առկտ է իդեալիստական մտածողության ավերիչ աղղեցությունը: Փոխանակ շոշափելու թոնդրակյանների և նրանց նախորդների գաղափարական բնորդանորության ոեալ պատմական հողը, հետազոտողները ելնում են գաղափարների ֆիլիացիայի արատավար տեսությունից:

Չեն ուսումնասիրված կամ վատ են լուսաբանված մանավանդ թոնդրակյանների և Հայաստանին սահմանակից կամ պատմականորեն նրա

¹ Մագիստրոս, նույն տեղում, եր. 160:

հետ առընչված ժողովուրդների աղանդավորական շարժումների միջև եղած իրական, պատմականորեն շոշափելի ու կոնկրետ կապերը։ Այս մարզում եղած թերացումները ոչ միայն ազգյուրների սղության հետեւնք են, այլև թոնդրակյան շարժման սկզբնավորման մինչ այժմ իշխող սխալ ժամանակարանության։ Անդիտացվում էր այն հանգամանքը, որ թոնդրակյան շարժումը սկիզբ էր առել մի ժամանակ, երբ Հայաստանի և Անդրկովկասի ուսիմանակից կամ նրանց հետ շփվող երկրներում, ամենից առաջ իրանում և Բյուզանդիայում, քուռամյանների և սկավլիկյանների ղեկավարությամբ տեղի էին ունենում ժողովրդա-աղանդավորական հղոր ապօտամբություններ, որոնց չեին կարող միանգամայն անհազորդ լինել Զարեհավանցին և նրա հետեւրդները։ Ինչպես և թոնդրակյանների ելույթները, այդ առլուտամբությունները հիմնականում կրում էին գյուղացիական բնույթ, հանգամանք, որ չեր արգելում նրանց ներդրավել իրենց շարքերը նաև ազգաբնակչության մյուս հատվածների որոշ տարրերին։ Ուրքի ելնելով տեղական և եկվոր ֆեոդալ իշխողների ու հարստահարողների դեմ, թոնդրակյանների պետք ապստամբները պայքարի գրոշ էին բարձրացնում հպատակությունների ժողովուրդների ազատագրման և քաղաքական ինքնորոշման մարտակոչերով։ Մասսանների պայքարը ծավալվում էր մինենույն կում նման պահանջների ու սկզբունքների համար։ Հատկանշական է, օրինակ, որ բալոր այս շարժումների բնթացքում առաջ էր քաշվում աղամարդկանց և կանանց իրավահավասարության պահանջը և կնոջ իրավական ստրկացման ինստիտուտի վերացման խնդիրը։

Բոլոր նշաններից զատելով՝ Զարեհավանցու և Արև-Բարդի պայքարը թոնդրակյան գրոշի ներքո կովող մի բուռն հայ գյուղացիների և Մանազկերտի էմիրի կղզիացած մենամարտ չեր սոսկ։

Համարական է, որ մուսուլման աղանդների հետ գաղափարական շփումներ են ունեցել տակավին պավլիկյանները։ «Ի հմտութիւն ածեան նոցուն (մուսուլմանական) ստուերագիր առասպելապատռում մատենիցն զհամբակացն խմբաւորութիւն», — գրում էր հայ պավլիկյանների մասին Օձնեցին¹։ Մատնանշելով մուսուլմանական գրքերի ազգեցությունը պավլիկյանների վրա՝ Օձնեցին անշուշտ կամենում էր վարկարեկած լինել նրանց «քրիստոնեության» անաղարտությունը։ Սակայն ինքյան անհնարին չէ, որ արարների հետ ունեցած համագործակցության շրջանում նրանք իրոք կարող էին օգտագործած լինել մուսուլման աղանդավորների գրքերը։ Ինչ վերաբերում է Զարեհավանցու և մուսուլմանական աղանդների միջև եղած իդեական հանդիպումներին՝ դրանք ևս կարող են բացատրվել ոչ թե աղանդների իդեական հաջորդակցության փաստերով, այլ նրանց միջև տեղի ունեցած իդեական ու կազմակերպչական շփումների ու կազերի առկայությամբ։

Բոլոր պարագաներում անհերքելի է Ամբատ Զարեհավանցու դլխավորած աղանդի բնորոշ մի քանի գծերի համբնկնումը՝ մուսուլմանական աղանդների հետ։

Ութերորդ դարի կեսերին Խորասանի փոխարքա Արու-Մուսլիմը, քաղաքական անհավատարմության մեջ մեղադրված, սպանվում է խալիֆ ալ-

¹ Յովհաննու իմաստասիրի Օձնեցւոյ, Մատենագրութիւնը, Վենետիկ, 1833, կը. 34:

Մանուկը արքունիքում: Ի պատասխան դրան, Խորասանի մայրաքաղաք Նիշաղուրում բռնկվում է խալիֆաթի և խումբի զեմ բազմահազար բանակի գլուխ տնցած Սումբադ մոգի ապատամբությունը:

Սումբադի կուսակիցները հայտարարում էին, թե Արու-Մուսլիմը մեռած չէ, այլ պահպատ պղնձապատ մի ամրոցում և որ Մազդակի հետ միասին նա հայտնվելու է կրկին աշխարհը վարելու համար: Արու-Մուսլիմը նկատվում էր առասպեկտական Շիրվինի մարմնացում, այն ազատարարը, որ հայտնվելու էր ճնշվածներին ու հարստահարվածներին ազատություն և հոգ տալու համար:

Առաջարեղ նետվելով «իոլամբ ցեղային խորանք չի ձանաչում» մարտակոչով, հետագայում «շիա» անունով հոչակված այդ աղանդավորները ոլլընապես արտահայտում էին խալիֆաթի կրունկի տակ ճնշված ժողովուրդների քաղաքական-ազատագրական տրամադրությունները:

Տարդ դարի երկրորդ կեսում Մավրիննախը (Ուղրեկոտանի) կենտրոնում — Զարաֆշանի և Կաշկայի հովտում, բանկից Միջին-Ասիական գյուղացիության անհամեմատ ավելի տեսական ու զորեղ մի ապատամբություն, որի առաջնորդ Մուկաննան, զարձյալ մազդակյան, իրեն հայտարարում էր մերթ մարմնացած աստվածություն, մերթ բիրյական մարգարեների, Քրիստոսի, Մահմեդի և Արու-Մուսլիմի հաջորդը¹: Մուկաննայի հետեւրդները հավատացած էին, թե իրենց առաջնորդի կրծքավանդակում խլրտում է Արու-Մուսլիմի անմահ հոգին²:

Միխայել Ասորու պատմելով, հին ժամանակներից ի վեր քրդերի մոռկար ամանություն այն մասին, թե ժամանակով հայտնվելու է Մահդի անունով մեկը և տիրելու է «ամենայն երկրի»: Ով հավատաս որան, մեռնելուց քառասուն օր անց պիտի հառնի՝ առժամանակ իրեն մարդ ապրելուց հետո անմահների աշխարհն անցնելու համար: Սպասողներից ոմանք ասուված էին համարում նրան, ոմանք՝ թագավոր: Խալիֆ Մամունի ժամանակ (813—833) հայտնվեց Մահդի անունով մեկը: Կարծեցին, թե նա անց սպասված Մահդին է, և նա ինքն իսկ հավատում էր դրան, թադ դնում գլխին, քող ձգում երեսին, հայտարարում իրեն երբեմն Քրիստոս, երբեմն ուուրը հոգի: Նրա շուրջը խմբված հավատացողների թիվը մեծանում էր, նրա համբավը տարածվում, զարհուրանք ազգելով խալիֆին³:

Այսուեղ նշված Մահդիին արարական աղբյուրները նշում են Զամիդան իրն Ասհլ անունով: Ինչպես նշում է Մարքվարտը, Զամիդան-Մահդիի կյանքին վերջ ավելց արարական սուրբ 814—816 թվականներին⁴:

821 թ. Հարավային Աղբյուրնականից Ազգանք է անցնում Զամիդան-Մահդիի հաջորդն ու նրա գործի շարունակողը՝ Բարեկը: Բարեկի առաջնորդությում արարների գլում պատերազմող քուսամյանները երկրից քշում էին խալիֆի հարկանաններին և հրաժարվում վճարել ֆեոդալների պահանջած կոռ ու բեկարը: Բարեկի հետեւրդները հավատացած էին, թե նրա մեջ է բռն գրել Զամիդան-Մահդիի հոգին: Մազմական տեսական հաջողությունները

¹ А. Ю. Якубовский. Восстание Мукашы — движение людей в белых одеждах*, Советское Востоковедение, М.—Л., 1948, V, стр. 38 и след.

² Մ. Տոմար, „Բաբեկ”, Մ., 1936, եր. 36:

³ Միխ. Ասորի, Ժամանակագրություն, եր. 364 և հետ.:

⁴ ՏԵ՛ս Մարքվարտի հոգվածը՝ «Հանդէս Ամսօրեայ», 1913, եր. 1602:

Նրան ներշնչել էին այն հավատը, թե ինքը հանդիսանում է աստծուց հղված մարգարե կամ այն Շիրվին թագավորը, որ կոչված է տապալելու իշխողներին և բարձրացնելու ճնշվածներին¹:

Անցնելով Անդրկռվկաս, սկզբնապես Բարեկը զինակցում է արարների զեմ ապստամբած Աղվանից և Սյունյաց ֆեոդալներ Սահլ իրն Սմբատին և Վասակին, որոնք նրա հետ միտցած պարտության են մատնում արար զորակամբերին:

Հիմնականում Աղվանից և Սյունյաց ֆեոդալներին շաղկապում էր քուսամյանների հետ՝ շարժման քաղաքական նպատակի ընդհանրությունը Որքան ավելի գրամ էր հանվում երկրից խալիֆի գանձատունը մանելու համար, նույնքան ավելի էին քայլայվում գյուղական տնտեսությունները և նշանակում է՝ այնքան ավելի քիչ բան մնում տեղական ֆեոդալների ձեռքն ընկնելու համար: Քանի զեռ հաղթող էր քուսամյանների սուրբ, ֆեոդալները քայլում էին նրանց հետ: Այնուամենայնիվ ֆեոդալները չեին անդիտանում դասակարգային ուրույն այն շահերը, որ անջրապետ էին ստեղծում իրենց և քուսամյանների միջև: Ի վերջո նրանք դավաճանեցին Բարեկին, ձենց որ պատերազմի բախտը երես շուռ ավեց նրանից և խալիֆը գլխադին խռոտացավ՝ նրա ձերբակալողին: 837 թ. գավագրաբար բոնելով նրան՝ Սահլը Ափշին գորահրամանատարի ձեռքով նրան նվեր հղեց խութիքին²:

Ինքն իրեն «քրիստոն հայութաբարող կամ հետևորդների կողմից «քրիստոն» ազգաբարված Զարեհավանցու երույթը առնչվում է «մահղիք», երեման մեր թվարկված գետքերի հետ: Աւշագրավ է, որ բոլոր այդ գետքերն անմիջապես նախընթաց էին կամ ժամանակակից թոնդրակյանների սկզբանվորմանը: Վերին աստիճանի նշանակալից է այն վկայությունը, որ հանգիպում ենք Զարեհավանցու մասին Մագիստրոսի թղթերից մեկում, որ ուղղված է ասորաց կաթողիկոսին: Այդտեղ նա ասում է, թե իր չչար մալորությունը Զարեհավանցին ուսել է «յումեմնէ պարսկական բժշկէ և յամակարաշխէ մողէ, որ Մըջուսիկդ կոչէք»³:

Բառ Ալիշանի, Մըջուսիկ անունը «մող» անվան պարսկական տրանսկրիպցիայից է առաջացել և խմաստով նույն է «մող» անվան հետ: 15-րդ դարի հայ ունիտոր Մխիթար Ապարանցու մատ Մըջուսիկ անունը հանդիպում է «Մըջուսիկ» ձեռվ, որ ըստ Աճառյանի եղծված է հայերեն Մըջուսիկ անձնանունից: Բառ որում Զարեհավանցու ուսուցիչը պարսիկ չէր, այլ «մողերին» հարած հայ: Նույնը հավասարում էր տակալիքն Մխիթար Ապարանցին: «Մըջուսիկ և Խուսիկ վարդապետքն Սմբատայ, — գրում էր նա, — և աշակերտք Սմբատայ՝ Կիւրեղ, Յօնէփ, Յեսու, Թեոդորոս, Անանէ, Արքայ Սորգիս և այլն, որք ամենեքին էին Հայք և ազանդաւորք, և ամենեքին զհին և զնոր կոտակարանսն ծաղր առնէին»⁴:

¹ Մ. Տօմարա, նույն տեղում, եր. 98 և հետ.

² Материалы по истории Азербайджана, вып. IV. Из соч. Якуби, История, Баку, 1927, ер. 10 և համ. Հմմ. Մ. Կաղանկատավացի, Պատմոթիւն Աղվանից աշխարհի, Թիֆլիս, 1913, еր. 374 և համ. և Իբր-ալ-Асир, նույն տեղում, եր. 55 և համ.:

³ Մագիստրոս, նույն ակզում, եր. 153:

⁴ Ալիշան, Հայապատում, եր. 550 և համ., և Աճառյան, Անձնանունների բառարան՝ համ. 3, «Մըջուսիկ» անձնանվան տակ:

Զարեհավանցու ուսուցիչների հայկական ծագումը չի վերացնում այն հնարավորությունը, թե նա գաղափարական որոշ շփում կարող էր ունեցած լինել զրադաշտական կամ խորանական աղանդների հետ։ Այնուհանդեք աչքի են ընկնում նաև թոնդրակյան աղանդապետի ցայտուն առանձնահատկությունները։ Թոնդրակյանների մոտ շեշտված է հայ գյուղաշխարհի ուսուցիչն շարժումը դիմավորած մարզուն հատկանշող ժողովրդայնությունը։ Ծծումբ ու հուր թափելով Զարեհավանցու անվան վրա ոչ մեկը նրա կատաղի հակառակորդներից չէր ասում, թե նրա հետեւրդներն իրենց առաջնորդին «մարմնացյալ աստված» էին համարում։ Խոսք չկա նաև այն մասին, թե թոնդրակյանները համատում էին նրա «անմահության»։ Տեղեկություն չկա նույնիսկ այն մասին, թե նա թագ էր կրում կամ կոչվում թագավոր։ Զարեհավանցու և քուսամյան առաջնորդների համար ընդհանուր է միայն «քրիստոն», կամ որ միենայնն է ներկա գեղքում, «մարգարե» կամ «մահդի» լինելու հավատը։ Հայանորեն քուսամյանների հետ նրան միացնում էր նաև «աղատարար» լինելու կաշումը։ Եթե քուսամյանների «մահդին» ոչ միայն «թագավոր» էր, այլև «աղատարար», ապա թոնդրակյանների «քրիստոնը» կարող էր եղած լինել ոչ միայն «մարգարե» այլև «փերկիչ», այսինքն՝ «աղատարար»։

Միջին դարերի ուսուցիչն օպողիցիան չէր պատռում կրոնական համեսկացությունների իդեոլոգիական քողը։ Այնուամենայնիվ իդեոլոգիական հին քողի տակ արծարծում էր հասարակական, քաղաքական նոր, աշխարհիկ, հակաֆեոզարական դադափարախոռություն։ Բայ որում ակներեւ է Զարեհավանցու հետեւզականությունը, նրա մշակած նոր հասկացությունների, առավել շոշափելի ուսուցիչն բովանդակությունն ու ավելի խոր ժողովը դայնությունը։

Պատահական չէին կարող լինել թոնդրակյանների և նրանց ժամանակամերձ կամ նրանց ժամանակակից խորամական աղանդների իդեական հանդիպումները։ Ամենայն համարկանությամբ դրանք թոնդրակյան և քուսամյան շարժումների միջև եղած ուսուլ կապերի հետեւանք էին։ Կան ուղեկություններ, որ քուսամյանների դեմ պայքարող արար կառավարիչներն ու զորապետները մտահոգված էին ձնշելու Հայաստանում Բարեկի հայ դաշնակիցներին։ Այս մասին կան որոշ ակնարկներ արար պատմագիր Յակուբի մոտ¹, նույն ազրյուրից տեղեկանում ենք նաև, որ Առանի (Աղվանքի) և Հայաստանի համագործակցությունը շարունակվում էր նաև Բարեկի մահց հետո²։

Հոգուտ այն ենթադրության, որ Բարեկի և նրա հաջորդների դաշնակիցները կարող էին եղած լինել հենց Զարեհավանցին և նրա հետեւրդները, վերհիշենք հենց այն փաստը, որ տակամին Զարեհավանցու ժամանակ թոնդրակյանների դեմ հայ եկեղեցու պետերից զատ պայքարում էին նաև Աղվանից եկեղեցու պետերը։ Աղվանի և հայ աղանդավորների շփումները չդադարեց նաև հետագայում։ Բնորոշ է Լաստիվերտցու հաղորդում տեղեկանքը

¹ Տե՛ս Մատերիալы по истории Азербайджана, եր. 144 և հաւ.։

² Նույն ակնում, եր. 18 և հաւ., 20 և հաւ.։

որ 11-րդ դարում տպրած թռնդրակյան կունծիկ արեգան ուսանել էր Աղջանից երկրից եկած մի վանականի մոտ¹:

* * *

Դառնանք թռնդրակյանների և բյուզանդական ոլովիկյանների կապերի խնդրին:

Ինքը անտեսն է թվում 8—9-րդ դարերում Բյուզանդիայում հանգիս եկաղ պավլիկյանների ու պատկերամարտիկների և Հայոստանում ու Աղվանքում նույնժամանակյա ժողովրդա-աղանդավորական խմորումների կապը:

Դավանաբանական իր դիրքավորումով հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը դիմագիր դիրք ուներ Բյուզանդիայի հանդեռ արդեն իսկ նրանով, որ հարօւմ էր 451 թ. Բաղկեղոնի եկեղեցաժողովում գատապարտված մոնոֆիզիտական ուսմունքին: Հիւագի, մանոփիզիտիզմը դավանաբանական այն գրաշն էր, որի ներքո ամրող միջնադարի ընթացքում ոլայքարում էին Բյուզանդիայի կողմից հետապնդված քրիստոնեական մի շարք եկեղեցիներ՝ սիրիականը, Պալտականը և Հայկականը:

Հայոստանում, Բյուզանդիայում և առաջավոր-ասիտական մի շարք այլ երկրներում տարածված պավլիկանությունը շաղկապում էր ժողովուրդների հականեկեղեցական աղանդը ֆեոդալիզմի գեմ ուղղված ուսույուցիոն շարժման հետ:

Պավլիկյանների առկայությունը Հայոստանում հավանական է 6-րդ դարի կեսերից սկսած: Երանց հալածելու համար հարկ եղավ այդ դարի հիսունական թքականների սկզբներին տեղի ունեցած Դիբինի եկեղեցաժողովի սանկցիան: Տակավին Դիբինի ժողովից առաջ, տեղական ֆեոդալների զինված ուժերի օգնությամբ հայ եկեղեցականներն ավերում էին այդ քաղաքի սիրիական նեստորականների ամրացած հանդրվանը՝ Գրիգոր Ռամիկի վանքը: Ակնրախ է այն իրազությունը, որ հայ պավլիկյաններին սնող մանիքեյան և մեսալյան հայացքները, մուտք գործելով Հայոստանի նեստորական առկայությունների ձեռներով տարածվող սիրիական գրականության միջոցով, պարաբռ հող էին դանում նոր միջավայրում: Աւշագրավ է, որ նեստորականները ելումուտ ունեին նույն Աղվանից երկրում: Համակրանք որսալով լայն ժողովրդախավերի մեջ, նրանք հանդես էին դալիս այլտեղ «ազքատառեր» կրօնավորների շապիկով: 6-րդ դարի կեսերին հայոց Հովհաննես Գարեգյան կաթողիկոսի կողմից Աղվանից Արտա կաթողիկոսին հղված թղթում ասված է, թե նեստորականները դալիս են այդ երկիրը Պետրոսի վանքից, «որ անուամբ աղքատառէր կոչի և գործովք քրիստոսատեաց»²: 7-րդ դարի վերջերին կամ 8-րդ դարի սկզբներին Հայոստանի պավլիկյանների շարքերում ուժ է ստանում պատկերամարտությունը, որը դրանից առաջ տարածված էր Աղվանքում³: 8-րդ դարի սկզբներին Հովհանն Օձնեցին Հայոստանի պավլիկյան աղանդը դիտում էր որպես մըծդղբներության (մեսալիականության) մնացորդ («խեշերանք»): Երա ասելով

¹ Ա. Լաստիվերացի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, եր. 151:

² Մ. Կաղանկատացից, Նույն ակղում, եր. 138:

³ «Ֆիրք թղթոց», եր. 73: Հմմ. Կաղանկատացից, Նույն ակղում, եր. 392 և հաջ.

Ներսես կաթողիկոսի օրերից ի վեր հայոց աշխարհում տարածված պատիկյան աղանդը խոշոր սպասնալիք էր դարձել (հայ եկեղեցու համար) մանավանդ նրանով, որ միացել էր Աղվանից երկրից մտած պատկերամարտության հետ¹:

Որչափ Օձնեցին պավլիկյանների շարժումը կապում էր Դիմինի ժողովի հետ՝ չենք կառածում, որ նրա մոտ հիշատակված ներսեսը պիտի լինի Ներսես Բ. Բագրեանդցին (548—557) և ոչ թե տվելի ուշ ապրած ներսես Գ. Շինող (641—661) կաթողիկոսը: Ինչպես հայոնի է, վերջինիս հետ Հայուսանում կապում էին ոչ թե պավլիկյանության կամ պատկերամարտության, այլ սրբնց հակադրված քաղկեդոնականության տարածումը:

Սիրիայի, Աղվանքի կամ Հայուսանի պավլիկյան հայացքները և պատկերամարտիկների շարժումը զորեղ արձագանք են գտնում կայսրության տրեելյան թեմերում՝ մանավանդ 7-րդ դարից հետո, երբ հայ գաղթականության զորեղ հոսանք սկսվեց գեղի արհմուտք՝ կայսրության Փոքր-Ասիան թեմերում և Բալկաններում բնակություն հաստատելու համար:

Ուշագրավ է, որ էրզրումի մոտ գտնված Մանանաղի շրջանի մի գյուղից էր պավլիկյան զեկավար Կոստանդին Սիղվանոսը, որ քարոզչական գործունեություն էր ծավալում յոթերորդ դարի երկրորդ կեսերին: Իններորդ դարում ապրած Պետրոս Սիկիլացին զիտում էր Մանանաղին որպես մի վայր, որը, ինչպես նա գրում էր, «մինչ հիմա իսկ մանիքեցիներ (իմա պավլիկյաններ) է սնում»: Ծաղումով հայեր էին նաև 8-րդ դարում ապրած պավլիկյան զեկավարներ Պողոսը, նրա որդիներն ու թոռները²: Իններորդ դարի սկզբներին պավլիկյանների հայ առաջնորդների շարքում նշանավոր դարձավ Վահանը³:

Օձնեցու վկայությամբ՝ պավլիկյան շարժումը տարածված էր «համբակաց» կամ «տիմար» ու պարզամիտ» մարդկանց մեջ, այլ խոսքով՝ ժողովրդական վարել խավերում⁴: Նման հասարակաշերտերի մեջ էր հող գրանում այդ շարժումը նաև հույն ու արքան բնակավայրերում և հատկապես գյուղացիության ու քաղաքացին արհեստավորության մեջ:

Հույն և սլավոն մասսաների հետ միասն Բյուզանդիայի հայ աշխատավորությունը պարզաբում էր իր ազատագրման համար՝ հակազրվելով եկեղեցուն, ֆեոդալական կարգերին և գրանց պաշտպան կայսերական իշխանությանը: Փոքր-Ասիական երկրների պավլիկյաններին քշում էին զեղի Բալկանյան թերակղզին, երկիյուղ կրելով, թե այլազես նրանք կարող են ձեռք մեկնել արարներին՝ կայսերական կառավարության դեմ պայքարելու համար: Այս մի քաղաքականություն էր, որ պիտի կիրառվեր նաև հայ պավլիկյանների նկատմամբ, քանի զեռ որպես կայսրության հակառակորդներ նրանք պաշտպանություն էին գտնում խոլիֆաթի կողմից:

9-րդ դարում Բյուզանդիայի պավլիկյան շարժման մարտական կայանները՝ Արգառուսը և Տեղրիկը, գտնվում էին հայ էթնիքական միջավայ-

¹ Օձնեցի, նույն տեղում, եր. 35 և հետո.

² Petri Sicili Historia Manichaeorum (Տես Migne, Patrologia graeca, t. 104), XVIII և XXVIII.

³ Նույն տեղում, XXXI և XL.

⁴ Օձնեցի, նույն տեղում, եր. 35 և հետո.

բռմ: Այդ կայսրներն էին կայսրության բազմալեզու ժաղովուրդների մեջ պավլիկյան գաղափարների տարածման հանգույցները: Այդ վայրերից էին պավլիկյանները հարձակվում իրենց հակառակորդների վրա:

Երդ դարի սկզբից և մինչև նույն դարի 30-ական թվականները գործած պավլիկյան պարագլուխներից մեկը — Սերգիոսը իր թղթերից մեկում հաղորդում էր, թե հետիւն շըջել է արևելքից մինչև արևմուտք և հյուսիսից՝ հարավ¹:

Ծառ հավանական է, որ Սերգիոսի քարոզած հայացքները — մասնավոր սեփականության լիրիզացում, վանական կարգածների համայնացում, ակտիվ պայքար հակառակորդների դեմ — նույն հայացքներն էին, որ քարոզում էր նաև նրան ժամանակակից և գաղափարամերձ Ամրատ Զարեհավանցին, թոնդրակյան շարժման պարագլուխը: Աչքի է ընկնում մանավանդ մի մանրամասնություն, որ ժամանում է թոնդրակյանների և պավլիկյանների գաղափարական մոտիկությունը:

Երդ դարի կեսերին պավլիկյանների առաջնորդ Կոստանդինը իրեն գնում էր Պողոս առաքյալի աշակերտ Սեղմանոսի տեղ: Սրան հաջորդած Սիմեոնը հանգես էր գալիս որպես Պողոսի աշակերտ Տիտոս, դար ու կես հետո Սերգիոսը հայտնվում էր որպես նույն առաքյալի Տյուքիլոս կոչված աշակերտ: Բյուզանդական աղքյուրների հավաստիացօւմով Սերգիոս Տյուքիլոսը հանգես էր գալիս որպես „Paraklet“—«մխիթարիչ» սուրբ հոգի» և հետեւրդների երկրպագության արժանանում իրեն՝ այդպիսին²:

Այսուղ հանգիպում ենք հոգու փոխանցման ու մեսիանիզմի նույն գաղափարներին, որ համապատասխան փոխակերպութերով առկա էին նաև քուռամյանների և թոնդրակյանների մոտ:

Հետաքրքրական է, որ ութերորդ դարում տեղի ունեցած անցքերը նկարագրելիս հույն պատմիչ Կեդրենոսը հաղորդում է, թե Շե Շեկոն Իսավրացու թագավորության հինգերորդ տարում հանգես եկալ ոմն սիրիացի, որը ստարար առավածորդի հոչակելով իրեն՝ մոլորության մեջ ձգեց հրեաներին³:

Անհնարին չէ նուի, որ պավլիկյանների մեսիանիստական գաղափարները Զարեհավանցու հետ հույն կամ սիրիական պավլիկյանների ունեցած անմիջական շիտութերի հետեւնք էին: Նման ենթագրության համար որոշ հիմք է տալիս 15-րդ դարում ապրած Մխիթար Ապարանցու կոմոկիլյատիվ գրվածքը: Այդական տեղեկություն կա այն մասին, որ թոնդրակյան աղանդը հիմնադրողի գործունեությունը տեղի է ունեցել երկու կենտրոններում: Փախչելով հայրենի Շամբառայից, պատմում է Ապարանցին, Ամրատը հաստատվեց նախապետ կայսերիների Խնունյաց գավառի Թոնդրակի գյուղում, ապա բյուզանդական Թուլայլի գավառի Տևլըրիկում⁴, այսինքն Սերգիոսի գործունեության մեջ հիշտառակած գլխավոր հանգրվանում՝ Տևլըրիկում: Մասդիստրոսի մի քանի ակնարկներից զատ⁵, Ապարանցին ձեռքի տակ ունե-

¹ Petri Sicili, XXXVI.

² Եռոյն տեղում, XXIV, XXVI և XXXII.

³ Cedreni, ed. Bonn., I, 793.

⁴ Ալիշան, Հայապատում, եր. 550:

⁵ Հմմատ. Մադիստրոս, նույն տեղում, եր. 157 և 164:

ցել էր երեխ նաև անհայտ մի ազգյուր: Բոլոր դեպքերում նրա հաղորդածը առիթ է տալիս ենթադրություն անել Զարեհավանցու և Սերգիոսի հնարավոր անձնական կապերի մասին:

Զարաչար սխալվում էր Զամչյանը, երբ ելնելով երեխ հենց Ապարանցու հաղորդածից կամ գուցե աչքի առաջ ունենալով Զարեհավանցու և Սերգիոսի ոչ միայն ժամանակակցությունը, այլև նրանց հայացքների մերձագորությունը, նույնացնում էր այդ ազանդապետներին¹: Հետեւղական լինելու դեպքում՝ նման նույնացումից հետո պետք էր հանգել նաև թօնդրակյան և պավլիկյան շարժումների նույնացմանը: Զամչյանը չի անում այդ, ոսկայն դա միայն ցույց է տալիս նրա անհետեսականությունը:

Միայն Սերգիոսի հետ չէ, որ կարող էր առնչված լինել Զարեհավանցու և լույթը: Հենց այն ժամանակ, երբ Հայաստանում սկսվում էր նրա գործունեությունը, Բյուզանդիայում արծարծվում էր Թոմա Գաղիրացու ապրուտամբությունը (821—824), որի մասնակիցները ոգեշնչված էին ազատագրական տրամադրություններով: Լուգովիկոս Բարեպաշտ Փրանկ կայսրին ուղղած իր նամակում Բյուզանդական Միքայել Բ. կայսրը, Թոմայի ժամանակակիցն ու հալածողը, գրում էր թե ձարակելով կայսրությանը սահմանակից արևելյան երկրները, այդ ազատամրությունն ընդգրկել է իրերներին (վրացիներին), հայերին, արխազներին, և մի շարք ուրիշ այլացեղ ժողովուրդների²: Մերկացնելով Թոմայի ազատամրության սոցիալական և քաղաքական արժատները, նույն պատմիչ Գենեղիսոր հաղորդում է: «Ոչ ոք անհաղորդ չէր մնում նրան, ոչ արենելքից, ոչ արեմուտքից, ոչ օտար ցեղերից, ոչ տեղացիներից, ոչ հարեաններից, ոչ էլ նրանցից, ում վիճակիված էր ստրկական դրություն և առում էր տերերին և ոչ էլ բոլոր այն ժողովուրդներից, որոնք տարբեր ժամանակներ ծովի կամ ցամաքի կողմից միանում էին և հետեւում նրան, ինչպես հավատակիցներին հայտնրված նոր մի Քուրքսիւմ³:

Թոմայի շարժման մեջ ներգրավվեցին Առաջայի մի շարք ժողովուրդներ: Ժողովրդական ձնչված մասսաների ապստամբական ծավալուն մի շարժում էր այդ, որին միացած էին նաև մանր աղնվականության որոշ տարբեր: Հույն պատմիչ Թեոֆանի երկը շարունակող հնդինակի առեւով՝ ստրուկներն այդտեղ տերերի գեմ էին, ստրատիոտը (զինվորը) զինված ձեռք էր բարձրացնում տակսիոտի (հրամանատարի) գեմ և լոխագը (ջոկատապետը) ստրատեգի գեմ⁴:

Ապստամբությունն սկսվեց նրանով, որ Լիոն Հայկազն կայսրի (813—820) թագավորության վերջում Թոման հպատակեցրեց ամբողջ Հայաստանն ու Մերձականական Խալիքյան (Լազիստանը) և տիրացավ այդ երկրների «իշխանություններին»⁵: Ինչպես երեսում է, նախազես նա գրավել էր հայ բնակչություն ունեցող Բյուզանդական Արմենիություն թեմը և օժանդակություն ստացել բյուզանդական նավատորմիդի և Փաքք-Ասիական մի

¹ Զամչյան Մ., Պատմություն հայոց, II, 895:

² Baronius Annales Ecclesiastici, t. XIV, եր. 63:

³ Сборник документов по социально-экономической истории Византии, М., 1951, եր. 115:

⁴ Նույն տեղում, եր. 115, ժան. 3:

⁵ Baronius, ibid.

շարք մարդերի կողմից, որոնք նշանավոր չափով բնակեցված էին նորագաղթ սլավոններով։ Այնուհետև Թուման հարձակման անցավ կայսրության մայրաքաղաքի վրա։

Նույն այս վերսիան նշված է նաև Գենեսիոսի մոտ։ Նրա ասելով հենված արեւելյան մի շարք ժողովուրդների մասնավորապես իրերների (վրացիների) ու արխազների և դեպի մանիքեռթյունը հակված լազերի օսերի, հայերի և այլ ժողովուրդների վրա, Թուման «ընդհանուր բանակ կազմեց և դարձավ ամրող Արեւելքի տիրակալը»¹։

Թումայի ապատամբությունն ուղղված էր պատկերամարտիկ կայսրների դեմ և արծարծվում էր շուղդափառությունը՝ վերականգնելու մարտակուչով։ Ապատամբության զեկավարի ծագման մասին ազրյուրների տեղեկությունները հակառական են։ Նրան անվանում են մերթ սլավոն կամ «սկյութացի», մերթ՝ հոռոմ կամ հայ։ Թվում է, թե այս կետում ազրյուրների տարածայնություններն անուղղակիորեն հավաստում են այն փաստը, որ Թումայի գլխավորած ապատամբության մեջ մասնակցում էին շատ ժողովուրդներ։

Ապատամբությունից շատ առաջ Թուման դեկերում էր Պատրիկ Վարդանի մատ, որը, անունից դառելով, ծագումով հայ պիտի լինի։ Սակա նա գտնվել էր պատկերամարտ Լեռն Հայկացնի մոտ։ Այնուհետև երկար ժամանակ թափառել էր՝ ապատամն որոնելով Սիրիայում և արարների մոտ։ Ավելի ուշ նա դաշինք կնքեց խալիքաթի հետ՝ հուսուլով այդ միջոցով ապահովել ապատամբության հաղթանակը²։

Չնայած, որ արեւելյան ժողովուրդների կողմից շարժման լայն արծագանք գտած լինելու մասին հույն ազրյուրների վկայությունները համեմարդիս են, այնուամենայնիվ հնարավոր է, որ այս մասին մեզ հասած տեղեկանքների մեջ կան չափազանցումներ։ Մասնավորապես դժվար է հասկանալ, թե «ամրող Հայաստանի» որ իշխանություններին էր տիրացել Թուման։ Արդյոք չի շփոթված Արտեմիա-ն „Armeniacon“ թեմի հետ, կամ միայն հայ ապարագեա Ամբատ Բագրատունու (Արլարասի) Բյուզանդիային սոհմանակից տիրույթները չէին բռնված ապատամբությամբ։ Վերջին դեպքում որոշ կովան կդանվեր «ուղղափառության» դրոշի ներքո ապատամբած Թումայի և նրան հարած Ամբատ Արլարասի «քաղկեդոնականության» համար։

Ազրյուրների մեջ ուղղակի ցուցմունքներ չկան Թումայի ապատամբության և նույն այդ պահին Հայաստանում խմբված թոնդրակյան շարժման մասին։ Որչափ Թուման ասպարեզ էր իջել «ուղղափառության» դրոշեակ և դործում էր որպես խալիքաթի դաշնակից, հազիվ թե կարող էր խոսք լինել նրա և հայ աղանդագործների գաղափարական համախոնության մասին։ Բայց որչափ նա պայքարում էր կայսրության դեմ և անզրադարձում կայսրության կողմից ճնշված ժողովուրդների տրամադրությունները — նրա անվան հետ կապված շարժումը սոցիալ-քաղաքական նախադրյալներ էր սուլծում հայ աղանդագործների հետ կապվելու համար։ Հիրավի, Գենեսիո-

¹ «Сборник документов...», Եր. 116:

² Հմմատ. А. А. Васильев, Византия и арабы. Политические отношения Византии и арабов за время Аморейской династии, СПБ, 1900, Եր. 25 և համ.

սի վկայությունն այն մասին, որ Թոմային հարում էին հայեր, որոնք բաժանում էին «Մանիկ» խայտառակ մոլորությունները, կարող են վերաբերել միտյն պատվիրական կամ թոնդրական հայերին:

Այս եզրակացությունը և հատկապես Թոմայի շարժման կատարած գերը ճշտելու համար կարող են օգտակար լինել Թոմայի մասին հայ պատմիչների մեջ հասցրած տեղեկությունները: Ասողիկը համարում է Թոմային «մոլորեցուցիչ», որի ժամանակ եղավ «քրիստոնէից շփոթումն և կործանումն»¹: Ասմգել Անեցին հաշվում է նրան սուտ թագավոր և զարձյալ՝ «մոլորեցուցիչ»²: Կրօստ որակումները հայ հեղինակներն առնում են զուցել Թոմային ժամանակակից և մեկ չհասած ինչ որ ազրյուրից: Նրանց գնահատականները համանական են զարձնում, որ մեծ պիտի եղած լինի Թոմայի ապատամբության արձագանքը նույն Հայաստանում և հայ ժողովրդական մասսաների մեջ:

* * *

Ի մի բերելով Սմբատ Զարեհավանցու արեւելյան և հույն Ժամանակակիցների մասին արած մեր այս դիտողորթյունները, մենք հավակնություն չունենք սպասված համարելու նրանց գաղափարական և մանավանդ կազմակերպչական կապերի հարցը: Կամենում ենք միայն մատնանշել, որ Զարեհավանցու ժամանակաբանության ինսդրի մասին մեր պաշտպանած տեսակետը ոչ միայն հնարավոր, այլև հավանական է զարձնում նման կապերի առկայությունը: Բոլոր պարագաներում՝ քուռամբանների, պատվիրայանների և թոնդրականների իդեական զուգադիպությունները, ինչպես նույն Հայաստանի շուրջը անզի ունեցած իրադարձությունները ըստ ամենայնի ընդունաջում են Զարեհավանցու մասին մեր տաղագրած լուսարանություններին:

¹ Ասողիկ, Պատմութիւն, եր. 143:

² Ս. Անեցի, «Հաւաքմունք ի զրոց պատմագրաց», 1893, եր. 91: